ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

--Օգոստոսի 2023 թվականի № -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի №520-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2022 թվականի նոյեմբերի 29-ի «էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկան, սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի №359-Ն, 2007 թվականի հունիսի 15-ի №275-Ն որոշումների մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» №520-Ն որոշման №1 հավելվածում՝ էլեկտրաէներգետիկական համակարգում սակագների հաշվարկման մեթոդիկայում (այսուհետ՝ Մեթոդիկա) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումը՝

1) Մեթոդիկայի 19-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) Հաղորդողի դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ԱՀ} = \sum_{i=1}^{m}\left(\left(\text{ԻԾ}_i^{\text{Հ}} - \text{ԻԾ}_i^{\text{Փ}}\right) * \text{Ս}_i - \text{ԳԷՀ}_i^{\text{Հ}} + \text{ԳԷՀ}_i^{\text{Փ}} + \Delta\text{ԳԷՀ}_i^{\text{Փ}}\right) * \left(1 + \frac{m * \text{Տ}}{100\%}\right)$$, որտեղ՝

ա. **ԳԷՀ$^{Հ}_{i}$-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների և Հաղորդողի սեփական ու տնտեսական կարիքների համար գնվող էլեկտրական էներգիայի հաշվարկային արժեքն է (դրամ),

բ. **ԳԷՀ$^{Փ}_{i}$-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների և Հաղորդողի սեփական ու տնտեսական կարիքների համար գնված էլեկտրական էներգիայի փաստացի արժեքն է (դրամ), ընդ որում նշված էլեկտրական էներգիան Հաղորդողի էլեկտրակայանում արտադրվելու դեպքում վերջինիս արժեքն այդ մասով որոշվում է տվյալ ժամանակահատվածի համար Հանձնաժողովի սահմանած Հաշվեկշռման նվազագույն սակագնով,

գ. **ΔԳԷՀ$^{Փ}_{i}$-ն** Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար էլեկտրական էներգիան Սակագնի հաշվարկում նախատեսվածի համեմատ առավել էժան գնով ձեռքբերելու արդյունքում i-րդ ամսում առաջացած խնայողության՝ Հաղորդողին թողնվող գումարն է (դրամ), որն ընդունվում է սույն մեթոդիկայի 19.1-ին կետով նախատեսված բանաձևով հաշվարկված մեծությանը հավասար, եթե այն դրական նշանով է, և ընդունվում է զրո, եթե այն բացասական նշանով է,».

2) Մեթոդիկան լրացնել հետևյալ բովանդակությամբ 19.1-ին կետով.

«19.1. Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար էլեկտրական էներգիան Սակագնի հաշվարկում նախատեսվածի համեմատ առավել էժան գնով ձեռքբերելու արդյունքում i-րդ ամսում առաջացած խնայողության՝ Հաղորդողին թողնվող գումարը (ΔԳԷՀ$^{Փ}_{i}$) որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\text{ΔԳԷՀ}_{\text{i}}^{\text{Փ}} = \left(\text{ԳԷԾ}_{i}^{\text{Փ}} * \text{ՄՍ}_{i}^{\text{Հ}} - \text{ԳԷԱ}_{i}^{\text{Փ}} - \text{ԱՆՀ}_{i}^{\text{ՓԲ}} + \text{ԱՆՀ}_{i}^{\text{ՓԴ}}\right) * 0.5$$, որտեղ՝

1) **ԳԷԾ$^{Փ}_{i}$-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար փաստացի ձեռքբերված էլեկտրական էներգիայի քանակն է՝ առանց ԷՄՇ ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում ձեռքբերված և Հաղորդողի էլեկտրակայանում արտադրված էլեկտրական էներգիայի (կՎտժ),

2) **ՄՍ$^{Հ}_{i}$-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար ձեռքբերվող էլեկտրական էներգիայի (առանց ԷՄՇ ուղիղ

պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում ձեռքբերվող և Հաղորդողի էլեկտրակայանում արտադրվող էլեկտրական էներգիայի) միջին կշռված սակագնի հաշվարկային մեծությունն է (դրամ/կՎտժ),

3) **ԳԷԱ$^{Փ}_{i}$-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների համար փաստացի ձեռքբերված էլեկտրական էներգիայի արժեքն է՝ առանց ԷՄՇ ուղիղ պայմանագրերի շուկայի կարգավորվող բաղադրիչում, հաշվեկշռման շուկայում ձեռքբերված և Հաղորդողի էլեկտրակայանում արտադրված էլեկտրական էներգիայի արժեքի (դրամ),

4) **ԱՆՀ$^{ՓԲ}_{i}$-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների ձեռքբերման արդյունքում առաջացած բացասական անհաշվեկշռույթի դեպքում ԷՄՇ հաշվեկշռման շուկայում գնված էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ),

5) **ԱՆՀ$^{ՓԴ}_{i}$-ն** i-րդ ամսում Հաղորդման ցանցում էլեկտրական էներգիայի կորուստների ձեռքբերման արդյունքում առաջացած դրական անհաշվեկշռույթի դեպքում ԷՄՇ հաշվեկշռման շուկայում և ԷՄՇ այլ բաղադրիչներում վաճառված էլեկտրական էներգիայի արժեքն է (դրամ)։».

3) Մեթոդիկայի 21-րդ կետի 2-րդ ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
—օգոստոսի 2023թ.